10.08.26 - 14.08.26
18:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐



Պահպանել Google օրացույցում

ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճ

Ս.թ. օգոստոսի 10-ին՝ ժամը 18:00-ին, ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում կմեկնարկի «ԱԲ կիրառություններ, ագենտային ԱԲ և ֆինանսական տեխնոլոգիաներ» խորագրով բաց սեմինարների շարքը:

Միջոցառումը կազմակերպվում է **«NextGen AI»** համայնքի (ղեկավարներ՝ Ռաֆիկ Առաքելյան, Վահագն Ղազարյան), **ԵՊՀ** մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի ուսանողական խորհրդի և ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի ամբիոնի (ամբիոնի վարիչ՝ Կարինե Ավետիսյան) կողմից՝ **ԱՄՆ Պետքարտուղարության «PFP»** («Professional Fellows Program») ծրագրի հետ համատեղ: *Կրթական նյութերը տրամադրում է «NVIDIA Deep Learning Institute»-ն:*

Միջոցառման տևողությունը.

- **ս.թ. օգոստոսի 10-ին՝ ժամը 18:00–20:00-ն:**

Գլխավոր բանախոսներ

- **Մարիոֆաննա Միլանովա** - «NVIDIA DLI» պաշտոնական դեսպան, Համակարգչային գիտությունների պրոֆեսոր, Լիթլ Ռոքի համալսարան (UA Little Rock, ԱՄՆ գործընկեր)

- **Վլադիմիր Քառյան** - «Ակբա բանկ» ԲԲԸ-ի գործառնական ռիսկերի կառավարման բաժնի ղեկավար («PFP» գործընկեր)

«NVIDIA»-ի աշխատարանների մասնակիցները հնարավորություն կունենան ստանալու «NVIDIA»-ի պաշտոնական հավաստագրեր և ծրագրային անվճար լիցենզիաներ:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am